



Funded by the European Union



*Մեկը վերականգնվող էներգետիկայի համակարգերից, որոնք Ծրագրի շրջանակներում տեղադրվել և օգուտ են բերում ՀՀ Շիրակի մարզի 19 համայնքներում*

## Ֆոտովոլտային կայան Ջրափի գյուղում

### ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝

Էլեկտրական բաշխման ցանցի հետ զուգահեռ աշխատող ֆոտովոլտային կայան

### ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝

Համակարգը կառուցվել է «Կանաչ էներգիան Շիրակի մարզում՝ հանուն «կանաչ» սոցիալ-տնտեսական առաջընթացի» ծրագրի շրջանակներում՝ վերականգնվող էներգետիկայի տեխնոլոգիաների կիրառման արդյունքում համայնքի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավումը ցուցադրելու նպատակով:

### ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ՝

Արևային ֆոտովոլտային կայանն աշխատում է էլեկտրական բաշխման ցանցի հետ զուգահեռ՝ արտադրված էլեկտրաէներգիայի չօգտագործված մասը ցանցին հաղորդելու միջոցով, որն հետագայում օգտագործվում է սպառողի կողմից կամ փոխհատուցվում է գործող սակագնի 50%-ի չափով: Այս տեխնոլոգիան հնարավորություն է տալիս հրաժարվել էլեկտրական կուտակիչների օգտագործումից:


ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

№	Բնութագիր	Մեծությունը
1	Անվանական հզորությունը	3 կՎտ
2	Լարումը	220 Վ
3	Հաճախականությունը	50 Հց

**ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ**

№	Օգուտներ (տարեկան)	Քանակ
1	<i>Տնտեսական</i> ՝ արտադրվող էլեկտրաէներգիա, դրա շնորհիվ խնայվող դրամական միջոցներ	5100 կՎտ*ժ 214000 դրամ
2	<i>Բնապահպանական</i> ՝ մթնոլորտ չարտանետվող CO <sub>2</sub> գազ	2,2 տ
3	<i>Սոցիալական</i> ՝ տնտեսված գումարի հաշվին իրականացվում է սոցիալապես անապահով ընտանիքների խմելու ջրի անվճար ջրամատակարարում	4 ընտանիք

**ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՄԻԵՄԱՆ**



ՄԱՍԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒ. Միքայել Կարապետյան, հեռախոս. 093-68-87-90



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝

Կանաչ Տեխնոլոգիաների Հայկական Կենտրոն

Հասցե՝ քաղաք Գյումրի, Կարեն Դեմիրճյան փողոց, 3-րդ նրբանցք, 14 տուն

Հեռախոս՝ 077-99-34-77; 093-22-12-03

Էլ. փոստ՝ [greentech.arm@gmail.com](mailto:greentech.arm@gmail.com)

Կայք՝ <http://agtc.am/>

*Էներգաարդյունավետ տեխնոլոգիական համակարգերը  
նախագծվում և իրականացվում են մեզ մոտ*